ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/173

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Հակոբյանի (լիազորագիր, տրված՝ 23.10.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.10.2019թ. թիվ /26-1/17071-2019 գրությամբ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 10.10.2019թ. թիվ 01/61-20973-19 գրության հիման վրա, 17.10.2019թ. թիվ /26-1/17071-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն շուրջ երեք տարի ծավալում է գործունեություն միջոցառումների կազմակերպման և սպասարկման ոլորտում: Այս ընթացքում Ընկերությունը բազմիցս մասնակցել է պետական տարբեր մարմինների կողմից կազմակերպված մրցույթներին, ճանաչվելով հաղթող բարեխղճորեն կատարել իր պարտականությունները, ջանալով՝ հնարավորինս հիշարժան եղանակով իրականացնել տարբեր մեծամասշտաբ նախագծերն ու խոշոր միջոցառումները /Ֆրանկոֆոնիա, Ամանորյա լույսերի վառման արարողություն, summit of minds ֆորում, Ընդդեմ ցեղասպանության հանցագործության գլոբալ ֆորում, Գորիս մշակութային մայրաքաղաք միջոցառում, Հանրապետության հրապարակում կայացած ամանորյա տոնական գիշերվա և սուրբ ծննդյան տոնական միջոցառումներ, Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառում, Թումանյանի ծննդյան 150 ամյակին Լոռվա Դսեղ գյուղում կազմակերպված միջոցառում, «Իմ քայլը հանուն Արարատի մարզի» ֆորումի կազմակերպում, 2019թ. ապրիլի 27-ին քաղաքացու օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում և այլ նշանակալից պետական ու կարևոր նշանակության միջոցառումներ/:

«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊ ընկերությունը սույն թվականի 18.09.2019թ.-ին գնման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/183» ծածկագրով մրցույթին կրկին օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցության հայտ է ներկայացրել, որի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.09.2019թ. թիվ 2-րդ արձանագրությամբ ճանաչվել է 1-ին, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Սակայն, երբ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.09.2019թ. թիվ 2-րդ արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից սույն հրավերի Հավելված 1-ով նախատեսված գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/183»

ծածկագրի փոխարեն նշվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/182» ծածկագիրը և էլեկտրոնային ծանուցմամբ առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղղել տեխնիկական վրիպակը և ներկայացնել դիմում-հայտարարության ուղղված տարբերակը, էլեկտրոնային ծանուցումը համապատասխան էլեկտրոնային հասցեում հայտնվել է spam բաժնում, որի արդյունքում տեսանելի չի եղել և համապատասխան արձագանքի չի արժանացել /screenshot-ը կցվում է/:

Մեկ աշխատանքային օրվա ավարտից հետո ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.09.2019թ. թիվ 3-րդ արձանագրությամբ որոշվել է մերժել «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի հայտը, որի էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցումը արժանանալով նույն ճակատագրին՝ կրկին ավտոմատ կերպով հայտնվել է ընկերության էլեկտրոնային փոստի spam բաժնում:

Արդյունքում, «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/183» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում, «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «նվազագույն գնային առաջարկը» մերժվել է, որի հիման վրա վերջինիս նախատեսվում է ներառել գնումների հետագա գործընթացիներին մասնակցության իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում:

Սույն գրության հետ կապված «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի դիրքորուշումը հետևյալն է. Երևանի քաղաքապետարանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ առաջարկվում է «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը՝ ղեկավարվելով նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, որը վերաբերում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններին: Սակայն Ընկերությունը տեղեկացնել է, որ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն թե գնային առաջարկի ներկայացման պահին, թե ներկայումս չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, այլ ընդհակառակը՝ մշտապես ունի ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի գծով գերավճարներ: Ուստի Ընկերությունը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ին չի վերաբերում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն խնդրում է գնումների գործընթացի մասնակցության իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում չընդգրկել հարցում, քանի որ.

-Վերոնշյալ խնդիրը ծագել է կապի և հեռահաղորդակցության միջոցների խափանման և/կամ մարդկային գործոնի միջամտությունից անկախ պայմաններում, որը չի կարելի դիտարկել որպես գնումների հետագա գործընթացից խուսափելու դիտավորություն,

-«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված ծանուցմանը չարձագանքելու հստակ դիտավորություն չի հետապնդել, մանավանդ, որ հայտարարված մրցույթի շրջանակներում ներկայացված առնվազն թվով 4 չափաբաժիններով ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ և այս դեպքում դիտավորությամբ գնումների գործընթացի հետագա գործընթացին մասնակցությունից հրաժարվելու վերաբերյալ խոսք լինել չի կարող,

-Ընկերության դիրքորոշմամբ, նմանատիպ դեպքերում, հաշվի առնելով նվազագույն գնային առաջարկի փաստը, նպատակահարմար կլիներ մրցույթի կազմակերպչի կողմից հավելյալ առնվազն հեռախոսազանգով ժամկետի ընթացքում տեղեկացնել նման բացթողնման վերավերյալ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն բազմիցս համատեղ աշխատանքներ է իրականացնել Երևանի քաղաքապետարանի հետ միասին:

Ընկերությունը խնդրել է դիտարկել այն հանգամանքը, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը և վերջինիս կարգավորող այլ իրավական ակտերը նմանատիպ իրավիճակների համար, երբ առկա է տեխնիկական և/կամ մարդկային գործոնի միջամտությունից դուրս ազդեցություն՝ դիտավորության բացարձակ բացակայության պայմաններում, չի նախատեսում որևէ կարգավորում և նման պարագայում, հաշվի առնելով «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի ունեցած հսկայական փորձառությունն ու ներկայումս ևս մի քանի պետական կարևոր միջոցառումների իրականացման ընթացքը, Ընկերությունը խնդրել է իրեն չներառել գնումների գործընթացի մասնակցության իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում:

Ընկերությունը պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/173 ընթացակարգի շրջանակներում 24.10.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.10.2019թ. թիվ 01/61-20973-19 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/183» ծածկագրով գնման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ: Ընկերության կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը (հավելված 1) չի համապատասխանում հրավերի պայմաններին՝ սխալ է նշված ծածկագիրը:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջով՝ ծանուցել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջով, մերժել է Ընկերության կողմից ներկայացված հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/173 ընթացակարգի շրջանակներում 24.10.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/173 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/173 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/183» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.09.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտում արձանագրվել է անհամապատասխանություն:

Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի շտկվել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.10.2019թ. թիվ /26-1/17071-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 10.10.2019թ. թիվ 01/61-20973-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված)

տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/183» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.09.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտում արձանագրվել է անհամապատաս-խանություն. Ընկերության կողմից ներկայացված դիմում-հայտարությունը (հավելված 1) չի համապատասխանում հրավերի պայմաններին՝ սխալ է նշվել ծածկագիրը:

Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի շտկվել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 1 հավելված՝ դիմում-հայտարարության մեջ Ընթացակարգի երեք ծածկագրերից երկուսը Ընթացակարգի «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/183» ծածկագրի փոխարեն նշվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/182» ծածկագիրը:

Ուսումնասիրելով վերոհիշյալ հավելվածում տեղ գտած վրիպակը, այնուամենայնիվ գտնում եմ, որ նշված վրիպակն էական չէ և չի կարող բավարար հիմք համարվել Ընկերության վարքագիծը գնահատելու, վերջինիս կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստն արձանագրելու և Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.10.2019թ. թիվ /26-1/17071-2019 գրությամբ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**